«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Սարգսյան Արսեն
ՄԱՐԶ	Արագածոտնի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ափնայի միջն դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ..... 5

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ..... 9

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ..... 14

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը: Ազգի նկարագիրը ձևավորվում է արժեքային դաստիարակության միջոցով: Երեխայի դաստիարակությունը դժվարին ու պատասխանատու գործ է, դրա հաջողությամբ է պայմանավորված մատաղ սերնդի զարգացումը և այս ասպարեզում մանրուքներ չկան: Ապագա սերնդի դաստիարակության և զարգացած հասարակության զարգացման գործընթացում ծանրակշիռ դերակատարումը վերապահված է դպրոցին: Դպրոցը պետք է օգնի սովորողներին հասկանալու հասկանալու բարոյականության գլխավոր սկզբունքները, յուրացնելու դրանք և առաջնորդվելու դրանցով ողջ կյանքի ընթացքում: Ճիշտ է, մարդը դաստիարակվում է ամբողջ կյանքի ընթացքում, սակայն կա մի տարիք, որն ամենաարդյունավետն է դաստիարակության գործընթացի կազմակերպման համար: Ընդհանուր ձևակերպմամբ՝ տարրական դպրոցի գերխնդիրը ոչ թե սովորողին գիտելիք-ներով զինելն է, այլ անձի կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի և վարքագծային նորմերի ձևավորումը: Այդ տարիքում երեխաներն ավելի զգայուն են, այդ տարիքում ավելի դյուրին է սկսել վարքագծային նորմերի, շփման կուլտուրայի, քաղաքա-ցիական դիրքորոշումների, արժեքային համակարգի, հասարակության համար պիտանի անձի ձևավորումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ յուրաքանչյուր երեխա դպրոց է մտնում արդեն որոշակիորեն ձևավորված կենսափորձով, զարգացվածության, հաղորդակցական կարողությունների որոշակի մակարդակով, տարբեր նախասիրություններով, դաստիարակչական աշխատանքը տարրական դպրոցում սկսվում է այս ամենի մանրամասն ուսումնասիրությամբ, ինչի վրա էլ հենվում է հետագա ողջ աշխատանքների համակարգը:

Արժեքային դաստիարակության գործընթացի հիմնախնդիրը միշտ էլ կարևոր է եղել թե՛ ամբողջ հասարակության, թե՛ կրթական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար և գտնվել է նրանց ուշադրության կենտրոնում: Այսօր, առավել քան երբեք, կարևորվում է կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացը: Կրթական

բարեփոխումների շրջանակում հատուկ ուշադրության է արժանանում այն հարցը, թե ովքեր են այսօրվա կրտսեր դպրոցականները, ի՞նչպես և ի՞նչ բարոյական որակներ պետք է ձևավորի հասարակագիտության ուսուցիչը :

Հետազոտության նպատակը Արժեքային դաստիարակության գործընթացի ուսումնասիրությունն ու բարելավման ուղիների որոնումն է հասարակագիտության դասընթացին:

Հետազոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել և վերլուծել դաստիարակության գործընթացը տարրական դպրոցում:
- Բացահայտել տարրական դասարանների ուսուցչի դերը կրտսեր դպրոցականի դաստիարակության գործընթացում:
- Կարևորել դպրոց – ընտանիք համագործակցությունը երեխայի դաստիարա-կության գործընթացում:
- Դաստիարակության գործընթացի բարելավման նպատակով առաջադրել ուղիներ:

Հետազոտության մեթոդների ընտրությունը կատարվել է քննարկվող հիմնահարցերի բնույթին և լուսաբանվող մանկավարժական երևույթների առանձնահատկութ- յուններին համապատասխան: Հետազոտության մեթոդներն են.

1.Գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,

2.Նորմատիվային - իրավական փաստաթղթերի ուսումնասիրություն,

3.Մանկավարժական հետազոտության էմպիրիկ հարցաթերթեր, դիտումներ, անհատական զրույցներ

Հետազոտության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

Արժեքային դաստիարակության խնդիրը հայ մանկավարժության մեջ մշտական քննարկման նյութ է եղել: Այն յուրաքանչյուր պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևոր ռազմավարական խնդիր է, ուստի, դաստիարակության ռազմավարության, մարտավարության մշակումը, իրականացումը և զարգացումը կրթության բնագավառի քաղաքականության կարևոր բաղադրամասը պետք է լինի:

Ժամանակակից հանրակրթական դպրոցում դաստիարակության կարևոր նպատակը ազատ, ինքնուրույն, ինքնաիրացված անհատականության, հայրենասեր քաղաքացու, ազգային արժեքների կրող, սեփական արժանապատվության զգացում, անընդհատ փոփոխվող աշխարհում կողմնորոշվելու կարողություն ունեցող, նախաձեռնող, իրավիճակների հետագա զարգացումները, հետևանքները կանխատեսող, համագործակցության համար բաց, ճկուն մտածողությամբ անձի, նրա անհատականության դաստիարակումն է [1,էջ 10]:

Այստեղից ակնհայտ է դառնում, որ դաստիարակության գործընթացի նպատակները բազմազան են և պայմանավորված են նաև տվյալ հասարակության արժեքային համակարգով :

Դաստիարակության նպատակը սահմանելու նպատակով՝ ուսումնասիրելով ՀՀ օրենքը <<Կրթության մասին>>, մեզ համար պարզ դարձավ, որ նրանում ձևակերպված չէ դաստիարակության նպատակը, միայն 4-րդ հոդվածի 2-րդ ենթակետում նշված է, որ.<<Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է>>: Նույն օրենքի 11-րդ հոդվածում նույնպես խոսվում է դաստիարակության մասին, սակայն այս հոդվածում

նույնպես կոնկրետ սահմանված չէ դաստիարակության նպատակը.<<Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը>>:

Դաստիարակության նպատակներից բխում է դաստիարակության գործընթացի բովանդակությունը, որը կարող է փոփոխվել դաստիարակության առջև դրված նպատակների փոփոխության հետ միասին: Դաստիարակության գործընթացի ճիշտ ու լրիվ իրականացումը ենթադրում է ունենալ դաստիարակության հստակեցված բովանդակություն: Արդի ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործ-ընթացները, աշակերտական կոլեկտիվների գործունեությունը, արտադասարանային, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը: Դաստիա-րակության բովանդակության համակարգի մեջ կարելի է ընդգծել տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, նաև կրոնաբարոյական դաստիարակությունը [2,էջ 269]:

Դաստիարակության բովանդակությունն ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն: Դաստիարակության բովանդակությունը ներառում է քաղաքացու, ապագա ընտանիքի ղեկավարի, անձի գործնականության, նախաձեռ-նողականության, գործարարության ձևավորումը և այլն: Այդ ամենը կարելի է իրագործել այն դեպքում, եթե դաստիարակության ամբողջական գործընթացն իրականացվի օբյեկտիվության սկզբունքով, եթե դաստիարակության տեսության և պրակտիկայի մեջ

բացառվեն ոչ ճիշտ, ոչ օբյեկտիվ վերլուծությունները, երբ վերլուծության փոխարեն, դաստիարակության գործընթացում իշխի սինթեզը [2, էջ 277]:

Ինչպես նշել ենք, դաստիարակության գործընթացի նպատակներից բխում են դաստիարակության խնդիրները: Ինչպես դաստիարակության ողջ գործընթացը, այնպես էլ դաստիարակության գործընթացի նպատակներն ու խնդիրները քարացած երևույթներ չեն, դրանք անընդհատ գտնվում են զարգացման ու փոփոխման մեջ և տարբեր ժամանակաշրջաններում դաստիարակության նպատակներն ու խնդիրները կարող են կրել տարբեր բովանդակություն: Դաստիարակության գործընթացի զարգացման վրա իրենց ազդեցությունն են ունենում դաստիարակության վրա ազդող շարժիչ ուժերը:

Դաստիարակության գործընթացի շարժիչ ուժերը նրան ներհատուկ հակասություններն են, որոնք պայմանավորում են հակադրությունների առաջացումը, իսկ դրանք տանում են դեպի զարգացում: Նշանակում է՝ դաստիարակության գործընթացում հակասություններն անհրաժեշտություն են: Դրանք ուսուցման և դաստիարակության գործընթացները զարգացնող շարժիչ ուժերն են:

Դաստիարակության գործընթացի շարժիչ ուժերն իրենց արտահայտությունն են գտնում այդ նույն գործընթացի անընդհատության, շարժունության (դինամիկայի), փոփոխականության մեջ: Շատ վստահ կարելի է ասել՝ դաստիարակության գործընթացը պատճառների հետևանքների, քանակական ու որակական փոփոխությունների, բացասման բացասումի, մշտապես նորացող ու կատարելագործվող գործընթաց է: Նշանակում է՝ դաստիարակության գործընթացը դիալեկտիկական է, որովհետև այդ գործընթացին ներհատուկ են հակասություններն ու հակադրությունները: Հակասությունները լինում են ներքին ու արտաքին:

Ներքին հակասությունները հանդես են գալիս անձի մեջ, նրա զարգացման ու ձևավորման բոլոր փուլերում: Այդ հակասությունների հաղթահարման համար կարևոր նշանակություն ունեն անձի ակտիվությունը, գիտելիքները, իրար հետ համաձայնեցված գործողությունները: Արտաքին հակասությունների դերը նույնպես շատ մեծ է դաստիարակության գործընթացի զարգացման համար: Դրանց շարքին կարելի է դասել,

օրինակ՝ ընտանիքի ու դպրոցի պահանջների միջև, խոսքի ու գործի միջև եղած հակասությունները: Դաստիարակի ամբողջ վարպետությունը նրանում է, որ նա ուշադրություն դարձնի հատկապես արտաքին նոր ծագող հակասությունների դինամիկային և դրանց հաղթահարմանը:

Արժեքային դաստիարակության գործընթացի հակասությունների ու հակադրությունների շղթայի օղակներում երբեմն հանդես է գալիս դաստիարակության թռիչքայնությունը: Այսինքն՝ միանգամից, անսպասելիորեն բացահայտվում է դաստիարակության արդյունքը: Այդ դեպքում է, որ քանակական փոփոխություններն արագորեն, աննկատելիորեն վերածվում են որակական փոփոխությունների: Դա տեղի է ունենում անձի համար ստեղծված բարդ, դժվարին իրավիճակներում: Հակասությունները հաղթահարելու համար մարդը դառնում է եռանդուն, ավելի համառ և ավելի դիմացկուն: Եվ ահա այդպես դաստիարակության գործընթացը միանգամից արտահայտում է իր մեջ թաքնված, մինչ այդ չերևացող կողմերը: Կասկած լինել չի կարող, որ դաստիարակության գործընթացում անսպասելիորեն երևացող արդյունքը (դաստիարակության թռիչքը) դաստիարակչական երկարատև աշխատանքի նստվածքի արդյունքն է [2, էջ 272-274]:

Այսպիսով արտադասարանային աշխատանքները նպաստում են ոչ միայն սովորողների մեջ ուսման նկատմամբ հետաքրքրության, արժեքային համակարգի ձևավորմանը, այլև երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը:

Դպրոցում այդ աշխատանքը հիմնականում դրված է դասվարի ուսերին: Պետք է նշել, որ տարրական դպրոցում կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության անցկացման առումով արտադասարանային աշխատանքների նպատակաուղղված կազմակերպումն ավելի շեշտադրված բնույթ է կրում՝ հաշվի առնելով անձի ձևավորման գործում կրտսեր դպրոցական տարիքի բացառիկ կարևոր նշանակությունը: Այդ տարիքում երեխայի կյանքում տեղի են ունենում շրջադարձային փոփոխություններ, որոնք կրում են ոչ միայն արտաքին դրսևորումներ՝ ֆիզիկական զարգացում, միջավայրի, հաղորդակցական դաշտի ընդլայնում, այլև ներքին՝ ֆիզիոլոգիական հասունացում, կամային որակների զարգացում, սոցիալական հմտությունների ձևավորում և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսուցչի՝ արտադասարանական դաստիարակչական աշխատանքների պլանը կազմելիս պետք է՝

ա/ Ներկայացնել դասարանի ընդհանուր բնութագիրը

- աշակերտների ընդհանուր քանակը/աղջիկ, տղա/
- աշակերտների և նրանցընտանիքների սոցիալական վիճակը,
- տվյալներ նրանցառողջության և ֆիզիկական զարգացման մասին,
- ճանաչողական հմտություններ (ուշադրության, հիշողության, պատկերացման, մտածողության առանձնահատկություններ),
- զգացմունքակամային և պահանջարկամոտիվացիոն շրջանակներ (անհատի ուղղվածությունը, հետաքրքրությունները, հարաբերությունները, արժեքայինհամակարգը),
- աշակերտների վարքը, արարքները:
- աշակերտների գիտելիքների մակարդակը,
- հոգեբանական և սոցիալական զարգացման մակարդակը, որը համապատասխանում է ուսումնադաստիարակչական գործընթացի երեք ֆունկցիաներին. ուսուցանող, դաստիարակող և զարգացնող:
- Դրանից բացի՝ դասղեկը/մանկավարժը/ ուսումնասիրում է դասարանը որպես խումբ, կոլեկտիվ, դասարանում միջանձնային հարաբերությունները, համախմբվածությունը, հասարակական կարծիքը, արժեքների միասնականությունը և այլն…
- Հարցաթերթերի և այլ հարցման մեթոդների միջոցով հնարավոր է հավաքագրել տարբեր տեղեկություններ՝ աշակերտների գործունեության դրդապատճառների, անհատական որակների և արժեքային կողմնորոշումների մասին: Հարցաթերթերը լինում են բաց (աշակերտը ազատ ընտրում է պատասխանը) և փակ

(պետքէընտրելտրվածպատասխաններիցորևէմեկը): Հարցաթերթի կազմումը բարդ աշխատանք է:

բ/ Նախորդ տարվա աշխատանքային պլանի համառոտ վերլուծությունը,

գ/ Հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն,

դ/ Նոր ուսումնական տարվա աշխատանքային պլանի նպատակը և խնդիրները:

ե/ Աշխատանքային պլանի կազման հիմնական ուղղությունները /կազմակերպչական աշխատանք, աշխատանքային դաստիարակություն, գնահատող-կողմնորոշող գործունեություն և ազատ շփում, անվտանգ երթևեկություն, աշխատանք ծնողների հետ, առողջ ապրելակերպ, ես քաղաքացին եմ Հայաստանի/ :

Կրտսեր դպրոցական տարիքը անձի դրական որակների, հատկանիշների ձևավորման համար անգնահատելի ժամանակաշրջան է: Ինչպես գիտենք այդ տարիքում երեխաներն ավելի զգայուն են, տպավորվող, դյուրահավատ, հակված են ընդօրինակմանը, ղեկավարվում են զգացմունքներով, որոնք էլ հիմանականում հանդես են գալիս իբրև նրանց գործողությունների արարքների, առհասարակ, վարքի խթաններ: Իսկ այն, ինչ ձեռք է բերվում, ընկալվում ու յուրացվում է զգայությամբ, հուզական երանգավորմամբ, մարդու մեջ ավելի խորությամբ ու կայուն է արմատավորվում, պահպանվում է երկար ժամանակ, հաճախ նույնիսկ ողջ կյանքի համար[4, էջ 6]:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաների մեջ ձևավորվում են անձի բարոյական հատկություններ՝ հայրենասիրությունը, պարտքի, պատվի զգացումները, կազմակերպ-վածությունը, հետևողականությունը, նպատակասլացությունը, հաստատակամությունը, ճշտապահությունը, կարգապահությունը, աշխատասիրությունը, որոնք, աստիճանա-բար ամրապնդվելով, վերածավում են անձնային արժեքավոր որակների:

Նման խորքային, ընդգրկուն և կարճ ժամանակահատվածում իրականացվող արագ զարգացումներ մարդու կյանքի հետագա տարիներին համարյա թե տեղի չեն ունենում: Այդ է պատճառը, որ կրտսեր դպրոցական տարիքը, իբրև անձի մտավոր, հոգեկան և ֆիզիկական կարողությունների զարգացման, ստեղծագործական և ինքնուրույն

գործունեության հմտությունների ձևաորման անփոխարինելի ժամանակաշրջան, պետք է ծառայեցնել նաև սովորողների մեջ ստեղծագործական կարողությունների, ազգային և համամարդկային իրական արժեքների, բարոյական նորմերի ձևավորման համար: Սակայն սովորողների մեջ միայն ուսումնական գործունեության ընթացքում հնարավոր չէ արմատավորել հետագա ուսումնառության ամուր և հուսալի հիմքեր, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել այդ նպատակներով կազմակերպվող բազմաբնույթ աշխատանքներ:

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում կարևոր դերակատարություն ունի աշակերտերի ծնողների և դպրոցի միջև ամուր կապի հաստատումը, որը անմիջական մասնակիցն ու միջնորդն է դասվարը[6,էջ 35,36]:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը ժամանակակից դպրոցում բնորոշվում է օբյեկտիվ պահանջներով և անհրաժեշտությամբ.

- ողջ հասարակության կրթադաստիարակչական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
- ընտանիքի կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ընտանիքում դաստիարակչական աշխատանքների բովանդակության և ձևերի շտկում,
- սովորողների ուսման, դաստիարակության հարցերում ընտանիքի, դպրոցի հասարակության պատասխանատվության բարձրացում,
- կրթադաստիարակչական խնդիրների լուծման գործում դպրոցի, ընտանիքի ակտիվ մասնակցության ապահովում.հանդիպման առանձին օրեր, անհատական հանդիպումներ, քննարկումներ, խորհրդատվություններ և այլն:
- հաղորդակցման տարբեր տեխնոլոգիաների կիրառում՝ արագ, ինտենսիվ հաղորդակցում ապահովելու նպատակով,
- Հասարակության մեջ, այդ ինստիտուտների ներսում մանկավարժի, ծնողի հեղինակության բարձրացմանն ուղղված աշխատանքներ,

- անկեղծ, վստահելի փոխհարաբերությունների կառուցում՝ հիմնված մարդկային փոխհարաբերությունների կարևորության արժեքի հիման վրա,
- Բոլոր գործընթացներում ձևական, ոչ իրատեսական մոտեցումների, խրատականության բացակայություն, ջերմ, փոխօգնող հարաբերությունների հաստատում,
- Ծնողների մանկավարժների, սովորողների համատեղ գործունեության հնարավորությունների ընդլայնում, զարգացում, պահանջների միասնականացում, նույնականացում,
- Կամավորական, արտադպրոցական, արտադասարանական աշխատանքներում ծնողների, մանկավարժների, սովորողների համատեղ ընդգրկվածության ապահովում,
- Դասարանի, դպրոցի, ծնողների, սովորողների՝ միմյանց հետ արդյունավետ շփումների, կապի հաստատում, հաղորդակցական կարողությունների զարգացում և այլն:

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձ: Ընտանիքում է ձևավորվում և մշակվում մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են [13, էջ 26-27]:

Ծնողների և դպրոցի փոխգործակցությունը արդյունավետ անդրադարձ կունենա ոչ միայն դաստիարակչական աշխատանքների, այլև ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման վրա: Առանց ծնողների օգնության և

աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումն օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է հասկանալ ու օգնել երեխային: Ընդ որում, այդ օգնության կարիքը զգում են ոչ միայն երեխաները, այլև ծնողները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Ուսուցման և դաստիարակության գործընթացում ցանկալի արդյունավետության ապահովումը պայմանավորված է ոչ միայն առկա ուսումնական նյութի ճիշտ ու ժամանակին յուրացմամբ, այլև երեխայի արժեքային համակարգի ձևավորմամբ: Աշակերտների դաստիարակության գործում պետք է միատեղվեն բոլոր օղակների ջանքերը:

Ըստ ռուս գիտնական Վ. Ա. Միխեևի՝ այսօր գործում է դպրոցի և ընտանիքի գործընկերության երկու մոդել՝ նախաձեռնողական և ձևական-ստիպողական: Նախաձեռնողական, մարդասիրական մոդելը գործընկերների շահերի, արժեքների և պահանջմունքների համաձայնեցման ծրագիր է: Դրա հիմքը օբյեկտիվությունն է, արդարությունը, հարաբերությունների անկեղծությունը, ինչպես նաև ընդունված պայմանագրերի ու համաձայնագրերի պարտադիր կատարումը: Գործնական ընկերակցության ձևական-ստիպողական մոդելին բնորոշ է ձգտումը՝ էլ ավելի մեծ թվով սուբյեկտներ ներգրավել պայմանագրային հարաբերությունների այս կամ այն ձևի մեջ: Մեր կարծիքով՝ կրթության ոլորտում իրենց շահերը հետապնդող տարբեր սուբյեկտների հետ կրթական հաստատության հարաբերություններն ու գործունեությունը չի կարելի սոցիալական գործընկերության արդյունք համարել: Կրթադաստիարակչական գործընթացի սուբյեկտներ պետք է դառնան բոլոր այն քաղաքացիները, որոնք շահագրգռված են դպրոցի արդյունավետ աշխատանքով: Դրանք են՝ ընտանիքը, հասարակությունը, պետական իշխանության տարածքային ինստիտուտները, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնագիտական մանկավարժական ընկերությունները, գիտական, մշակութային, առևտրային և հասարակական կազմա-կերպությունները: Ուսուցիչը պետք է կարողանա բնականոն հունի մեջ դնել ընտանիքի բոլոր անդամների համատեղ դաստիարակչական ներուժը: Իր գործունեության մեջ նա հաշվի է առնելու ընտանեկան դաստիարակության ոճերը, ընտանիքի տիպաբանությունը և երեխաների հիմնական տիպերը: Ներկա ժամանակահատվածում հասարակությունը դպրոցի առջև նոր խնդիրներ է դնում՝ ծնողների դաստիարակչական ներուժի ճիշտ ու նպատակահարմար օգտագործման և նրանց ուսումնադաստիարակչական

աշխատանքների կառավարման մեջ ներգրավելու առումով: Դա նշանակում է, որ դպրոցը և ընտանիքը պետք է դիտարկել որպես հավասար իրավունքներ ունեցող գործընկերներ, որոնց գործողությունների հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը: Ուստի երկու կողմերի սոցիալական գործընկերությունը պետք է դառնա դպրոցում երեխայի բարեհարմարության պայման: Իսկ փոփոխությունը դիրքորոշումն երում կհանգեցնի դպրոցի և ընտանիքի փոխգործակցության նոր ձևերի որոնմանը [15,էջ 46-52]:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դաստիարակության գործընթացի առկա վիճակը հասարակագիտության ժամերին և դաստիարակության գործընթացի բարելավման նպատակով առաջադրել ուղիներ:

Հետազոտության խնդիրները.

1.Ուսումնասիրել թե ինչ արժեքային համակարգ է ձևավորված դպրոցականների մոտ հասարակագիտության ժամերին:

<<Հասկացություններ ըստ կարևորության>> մեթոդիկայի նպատակն էր բացահայտել, թե այսօր ինչ արժեքային համակարգ է ձևավորված կրտսեր դպրոցականների մոտ, ինչ խնդիրներ կան, եվ հատկապես որ հիմնախնդիրներին պետք է առավել ուշադրություն դարձի դասվարը դաստիարակության գործընթացը կազմակերպելիս:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ Է ԱՐԺԵՔԸ: ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

Քննարկում ▶ Ի՞նչ եք հասկանում՝ արժեք ասելով:

Թվարկե՛ք մի քանի կարևոր արժեքներ:

Ի՞նչ եք կարծում, մարդն ինքնին արժե՞ք է:

Դուք բոլորդ նույն տարիքի, նույն սերնդի, նույն ժա-մանակաշրջանի մարդիկ եք, և թվում է՝ ձեր հայացք-ները պետք է մոտ լինեն իրար:

Որպես կանոն՝ դա այդ-պես էլ լինում է, սակայն չի բացառվում, որ լինեն նաևայնպիսին, որ ունենան իրարից խիստ տարբեր տեսա-կետներ: Օրինակ՝ մեկն ասում է, որ կարևորը բարությունն է,ուրիշին օգնելը, ճիշտ պահվածքը, ազնիվ լինելը, արդա-րամտությունը, կրթությունը, մյուսը կարծում է, որ կա-րևոր են հարստությունը, փողը, պաշտոնը և այլն:

Կարևոր բաների մասին խոսելիս խիստ տարբեր, անգամ հակադիր տեսակետներ կարելի է լսել: Կլինեն շատերը, որոնք առաջին հերթին կնշեն շքեղ բնակարանի, ավտոմեքենայի և նման այլ բարիքների մասին: Մինչդեռ ուրիշները կհի- շեն այլ հասկացություններ, ինչպիսիք են գեղեց- կությունը, հանդուրժողականությունը, հավասա- րությունը և այլն: Փորձե՛ք ինքնուրույն բերել այլ օրինակներ: 514* Հայրենիքներն ապ- Ասույթներրում են հայրենասի-րությամբ, ընկնում՝ Չես նկատի՝ երբ և ինչպես է շփումն իմաստուն մարդկանցդրա պակասից: հետ քեզ օգուտ տվել, սակայն այդ շփումից ստացած օգուտնԲացարձակապես ինքնին կնկատես:հաշտելի են հայրե-նասիրությունն ու Ֆեդոնմարդասիրությունը:Միայն ազգասե՛րը Ընտանիքը բնության հրաշալիքներից մեկն է:կարող է սիրել և Ջորջ Սանտայանամարդկությունը:Հայրենապաշտպան Խորհե՛ք բերված ասույթների շուրջ:

Քննարկում ▶ Ձեր կարծիքով այս կամ այն արժեքը գնա- հատելու, կարևորելու համար անհրա- ժե՞շտ է արդյոք գիտելիքների որոշակի պա- շար և կենսափորձ: Օրինակ՝ նա, ով սիրահարված է, կարծում է, թե իր սիրած էակն աշխարհում ամենագեղեցիկն է, թե- կուզև ուրիշները համաձայն չլինեն դրան: Ժամա- նակի

ընթացքում հնարավոր է, որ փոխվի մար- դու կարծիքն իր «սիրո առարկայի» վերաբերյալ: Կամ՝ հայրենիքի պաշտպանությունը մի դեպքում կա- րող է լինել հայրենիքի նկատմամբ սիրո, նվիրվածու- թյան արտահայտություն, մյուս դեպքում՝ դիտվել որպես քաղաքացիական պարտքի կատարում (այսինքն՝ մենք դա կատարում ենք՝ պարզապես ենթարկվելով օրենքին): Ցանկացած դեպքում հայրենիքը մեզ համար ան- ժխտելի, անանց արժեք է:52 Առանց հայրենիքի պատմության, սեփական մշակույ- թի որոշակի իմացության դժվար է պատկերացնել ճշմա-րիտ, գիտակցված հայրենասիրությունը:Քննարկում ▶ Թվարկե՛ք արժեքներ, որոնք ձեր կարծիքով երբևէ չեն կորցնի իրենց նշանակությունը: Ինչո՞ւ եք այդպես կարծում: Ժամանակի ընթացքում կայուն, անգամ հարատևթվացող արժեքները կարող են էական, լուրջ փոփոխու-թյուն կրել: Օրինակ՝ ուշ միջնադարում, երբ ձևավոր-վում էր ժամանակակից Եվրոպան, աշխատանքը հա-մարվում էր մարդու կարևորագույն պահանջմունքներիցմեկը, առանց որի մարդկային կյանքը կհամարվեր իմաս- տազրկված:

Մարդիկ, ովքեր չէին աշխատում, այն դա-րաշրջանում հասարակության կողմից արհամարհան-քի էին արժանանում: Աշխատանքի նկատմամբ այսպիսիվերաբերմունքը բնորոշ է նաև մեր ժամանակներին: Սակայն հանրային գիտակցության մեջ գոյությունունի նաև մեկ այլ պատկերացում, համաձայն որի՝ աշ- խատանքը մարդու ամենաառաջնային արժեքը չէ. ուղ-ղակի պետք է փող՝ զվարճանալու, կյանքի հաճույքներըվայելելու համար: Ըստ այդպիսի պատկերացման՝ փողկարելի է ձեռք բերել ոչ միայն աշխատանքով, այլև հա-ջողակ լինելով կամ բախտի բերմամբ: Այժմ արդեն մարդկանց մեծ մասը, գիտակցելով այդ-պիսի մտածողության ոչ ճիշտ, պատրանքային լինելը,կրկին բարձրացնում է աշխատանքի՝ նախկինում ունե-ցած հասարակական արժեքը վերականգնելու խնդիրը:

Աշխատանքից բացի՝ մարդկանց համար գոյությունեն ունեցել և ունեն շատ այլ արժեքներ՝ ազատություն,պատասխանատվություն, արդարություն, բարություն,սեր, հավատարմություն և այլն: Իսկ ինչպե՞ս կարելի է բացահայտել արժեքների վե-

բաբերյալ սեփական պատկերացումները: Ինչպես ասվեց, արժեքները հաստատուն, մեր կյանքումշատ կարևոր նշանակություն ունեցող կողմնորոշիչներ են:

Յուրաքանչյուր մարդ ունի արժեքների սեփական «հավա- քածու», որին հետևում է կարևոր որոշումներ կայացնելիս: Այդ արժեքները մեզ օգնում են պարզելու, թե ինչ ակնկա- լիքներ կարող ենք ունենալ մեզնից և ուրիշներից: Մարդը որպես արժեք Մի քանի հարցերի պատասխանելով՝ կարող ենք բա- ցահայտել, թե ինչն ենք արժևորում կյանքում: • Ի՞նչն ենք մենք համարում կարևոր: • Դրանք առաջին հերթին նյութակա՞ն բնույթ ունեն, թե՞ ոչ: • Ինչո՞ւմ է դա արտահայտվում, այսինքն՝ ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս, որ դրանք կարևոր են մեզ համար: • Կշարունակե՞նք արդյոք արժևորել դա և ցույց տալ մեր վերաբերմունքը անգամ, եթե ծիծաղի, ծաղրի արժանանանք այդ պատճառով: • Նշե՛ք մեկ–երկու արժեք, ինչը համարում եք ամենակարևորն ու առաջնայինը: Շատ հաճախ հայտնվում ենք այնպիսի իրավիճակ- ներում, երբ երկու՝ իրար հակասող արժեքների միջև պետք է կատարել ընտրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հանրակրթական դպրոցում հասարակագիտության ժամերին կարևորվում է գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը, իսկ դաստիարակության գործընթացը, որպես այդպիսին, կարծես անտեսված է :
- Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկկողմանի երկարատև ու նպատակասլաց գործընթաց է, որն ունի ընդհանուր նպատակ: Այդ երկու հաստատությունների համագործակցությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործընթացում ծնողներին հանդիպող դժվարությունները, նրանց կողմից ներկայացվող առաջարկությունները, աշակերտների կրթական պահաջմունքները, որոնք կնպաստեն դաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացմանը:

. Դաստիարակության գործընթացն առավել արդյունավետ կլինի, եթե

- Ուսուցիչը միշտ օրինակելի լինի, սեփական վարքով աշակերտների համար օրինակ ծառայի, նրանց վերաբերվի սիրով ու հարգանքով,
- Դպրոցում և դասարանում ստեղծվի բարոյական առողջ մթնոլորտ, ձևավորվի բարոյական նորմերի պահպանման մշակույթ՝ որը կնպաստի բարոյական համոզմունքների ամրապնդմանը:
- ծնողներին ու հասարակայնության ներկայացուցիչներին ընդգրկել դպրոցում կազմակերպվող դաստիարակչական աշխատանքներում՝ նկատի ունենալով, որ ծնողներն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր ուսուցիչներն են բարոյական դաստիարակության հարցում,
- վարքի կանոնների օգնությամբ վերահսկել աշակերտական կոլեկտիվի բարոյական կարգապահությունը, հետևել այդ կանոնների կատարմանը և փոխադարձ հարգանք ձևավորել միմյանց նկատմամբ,
- սովորեցնել կոնֆլիկտային իրավիճակներում ելքեր որոնել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղուզումցյան Գ.Վ., Դաստիարակության ժամանակակից խնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցում, Մանկավարժության արդի հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու, էջ 10-14, Երևան, 2015:
2. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, էջ 3- 455, Երևան, 2005:
3. Բալայան Ա., Միջոցառումները տարրական դպրոցում,Երևան, 2009:
4. Բալայան Ա.,Պատրաստվում ենք հանդեսի, Երևան, 2014:
5. Դալլաքյան Ա. Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը ժամանակակից դպրոցում, << Մանկավարժության արդի հիմնախնդիրները>>, Գիտական հոդվածների ժողովածու, էջ 111-117, Երևան, 2015:
6. Գյուրբուդաղյան Ա., Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 8-րդ դասարանի համար
7. Թոփուզյան Ա.Օ., Դաստիարակության հայեցակարգ (նախագիծ), <<Մանկավարժություն >>, 7-8, Երևան, 2008, էջ 4-25:
8. Թոփուզյան Ա. Օ., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, էջ 3- 297, Երևան, 2009:
9. Հակոբյան Լ. Հ., Ադամյան Ն. Հ., Ընտանիք-դպրոց-երեխա փոխհարաբերությունների որոշ հարցեր, <<Մանկավարժության արդի հիմնախնդիրները>>, էջ159-166, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015:
10. Հարությունյան Գ. Ն., Սովորողների առողջության պահպանումը որպես մանկավարժության ժամանակակից հիմնախնդիր, <<Մանկավարժության արդի հիմնախնդիրները>>, Գիտական հոդվածների ժողովածու, էջ171-175, Երևան, 2015:
11. Մարկոսյան Ն. Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, <<Մանկավարժության արդի հիմնախնդիրները>>, Գիտական հոդվածների ժողովածու, էջ 2005-2010, Երևան, 2015: